
«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՕՍՄԱՆՑԻՕՑ» ԵՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԻ
ԵՎ ԺԱՄԱՆԱԿԻ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՁ

ԱՐՄԵՆ ՎԻՐԱԲՅԱՆ

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի № 1496 ձեռագրում գետեղված «Պատմութիւն Օսմանցւոց» վերտառությամբ լայնածավալ երկը մշտապես գտնվել է հայ ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում: Վերջինիս հանդեպ հետազոտողների հետաքրքրությունը պետք է պայմանավորել այն հանգամանքով, որ այս աշխատությունը հիանալի սկզբնաղբյուր է ոչ միայն Օսմանյան կայսրության, այլև նրա հետ աղերսվող երկրների ու ժողովուրդների, այդ թվում Հայոց պատմության ուսումնասիրության համար: Երկասիրության տասներեք հաջորդական գլուխներում, որոնք անվանված են գրքեր, ներկայացված են Օսմանյան կայսրերի վարած նվաճողական պատերազմները Եվրոպայում ու Ասիայում, եվրոպական երկրների հետ կիսալուսնի կայսրության դիվանագիտական հարաբերությունները, տերության հպատակ ժողովուրդների ներքին կյանքի հետաքրքիր մանրամասներ:

Իրենց ուսումնասիրություններում օգտվելով այս երկից՝ հայ հետազոտողներն անդրադարձել են նաև № 1496 ձեռագրի հեղինակի և ժամանակի հարցերին: Խնդիրն այն է, որ ուշմիջնադարյան լավագույնս պահպանված այս մատյանում ոչ միայն բացակայում է ձեռագրի գրչության հիշատակարանը, այլ նաև ակնարկ անգամ չկա ձեռագրի հեղինակի կամ գրչի, ինչպես նաև գրչության ժամանակի վերաբերյալ¹: Միակ հիշատակարանը վերաբերում է Ստ. Փափագյանցի² կողմից Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի գրատանը սույն ձեռագրի նվիրատվությանը, որը, սակայն, խնդրո առարկայի լուսաբանման շուրջ որևէ տեղեկություն չի պարունակում. «Յիշատակարան Պատմութեան Օսմանցւոց: Նուիրեալ Ստեփաննոսէ Խնդիրեան Փափագեանց ի գրատուն Սրբոյ գահին Էջմիածնի ընդ ձեռն Տ. Տ. Մատթէոսի Սրբազան կաթողիկոսի և ծայրագոյն պատրիարքի Ամենայն Հայոց: Ի 20-ն մայիսի 1859 ամի, ի Կ. Պոլիս»³: Այս հանգամանքն էլ թույլ է տվել հայ ուսումնասիրողներին երկի և ձեռագրի հորինման հանգա-

¹ - 1496 ձեռագրի առջևի կազմին փակցված թղթի վրա կարդում ենք՝ «Պատմագրութիւն Օսմանեան պետութեան մեծադիր, նօտրագիր, գրեալ ի թղթի, թիւն և անուն գրչին անյայտ, անյիշատակարան» (ընդգծումը մերն է – Ա. Վ.):

² Խոսքը, հավանաբար, վերաբերում է պոլսահայ հայտնի հասարակական-քաղաքական գործիչ, հրապարակախոս, իսրագիր, մանկավարժ Ստեփան Փափագյանցին (1840–1888):

³ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), ձեռ. -1496, էջ 329ա:

մանքների վերաբերյալ տարաբնույթ տեսակետներ առաջ քաշել: Մատենադարանի ձեռագրացուցակներում № 1496 մատյանի գրչի վերաբերյալ որևէ անդրադարձ չկա, իսկ գրչության ժամանակը թվագրված է XVIII դարով⁴: Անդրադառնալով XVII դ. Օսմանյան կայսրությունում տիրող ներքին խառնաշփոթին և հպատակ ժողովուրդների ծանր վիճակին՝ Հ. Նաջարյանը մեջբերում է խնդրո առարկա ձեռագրից մի հատված՝ այն վերագրելով «ժամանակակից մի անհայտ» գրչի⁵: Հեղինակը նույն կարծիքն է արտահայտում նաև իր մյուս աշխատության մեջ՝ Օսմանյան կայսրության հետ Վենետիկի և Հունգարիայի դիվանագիտական հարաբերությունների մասին խոսելիս⁶: Անդրադառնալով 1646 թ. թուրքական փաշաների կեղեքումներին՝ Հ. Անասյանը և Մ. Ջուլայյանը դիմում են № 1496 ձեռագրում զետեղված երկի օգնությանը՝ այն վերագրելով դեպքերին ժամանակակից «մի անանուն հեղինակ»-ի⁷:

№ 1496 ձեռագրի հեղինակի և գրչության ժամանակը ճշգրտելու փորձ կատարել է նաև Վ. Հակոբյանը, ում տեսակետներն այս հարցի վերաբերյալ ժամանակի ընթացքում փոփոխություն են կրել: Հեղինակը նախ անդրադարձել է ձեռագրի գրչության ժամանակին: Ներկայացնելով Ուկրաինայի և ուկրաինացիների վերաբերյալ հայկական սկզբնաղբյուրներում պահպանված տեղեկությունները, Հակոբյանն անդրադարձ է կատարում նաև № 1496 ձեռագրին՝ այն շարադրված համարելով XVII–XVIII դդ.⁸: Ավելի ուշ գրված մի հոդվածում, խոսելով այս անգամ հայկական սկզբնաղբյուրներում ուկրաինական քաղաքների վերաբերյալ վկայություններին, Վ. Հակոբյանն առաջին անգամ իր տեսակետն է հայտնում ուսումնասիրության առարկա երկի հեղինակի վերաբերյալ: Լվով քաղաքի և Ուկրաինայի բնական սահմաններին անդրադառնալիս՝ հոդվածագիրը մեջբերում է վերջինիս վերաբերյալ № 1496 տեղ գտած վկայությունները և նշում, որ այս ձեռագրի հեղինակը Գեորգ Դպիր Պալատցին է⁹: Վ. Հակոբյանը, սակայն, զերծ է մնում այս տեսակետի օգտին որևէ հիմնավորում ներկայացնելուց:

⁴ Յուզակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա, կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթարյան, Երևան, 1965, էջ 567, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Դ, կազմեցին՝ Ա. Քեօշկերեան, Կ. Սուքիասեան, Յ. Քեօսեան, Երևան, 2008, էջ 1443:

⁵ Հ. Նաջարյան. XVII դարի սկզբի թուրք-իրանական պատերազմը և հայերի տարագրությունը, Երևան, 1959, էջ 7:

⁶ Հ. Նաջարյան. Թուրք-իրանական հարաբերությունները XVI դարում ու XVII դարի առաջին կեսին և Հայաստանը, Երևան, 1961, էջ 63:

⁷ Հ. Անասյան. XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում (պատմական հետազոտություն), Երևան, 1961, էջ 37, Մ. Ջուլայյան. Ջալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ, Երևան, 1966, էջ 95:

⁸ Исторические связи и дружба украинского и армянского народов, сборник материалов научной сессии. Ереван, 1961, с. 212.

⁹ Исторические связи и дружба украинского и армянского народов, сборник материалов второй украинско-армянской научной сессии. Киев, 1965, с. 70 и 73.

Խնդրո առարկա ձեռագրի հորինման հանգամանքների ճշգրտման փորձ Վ. Հակոբյանը կրկին կատարում է 1971 թ.՝ ընդարձակ հոդվածով¹⁰ էական սրբագրումներ մտցնելով իր նախկին դիրքորոշումներում: Նա նախ ներկայացնում է ձեռագրում զետեղված երկասիրության կառուցվածքը և համառոտ բովանդակությունը՝ ցույց տալու համար թուրքական արքունիքին այս աշխատության հեղինակի մոտ կանգնած լինելու հանգամանքը: Ապա հիմք ընդունելով երկի մեջ 1789–1807 թթ. կառավարած սուլթան Մելիմ III-ի մասին հիշատակությունը՝ ձեռագրի շարադրանքը ավարտած է համարում 1789–1807 թթ.¹¹: Անդրադառնալով ձեռագրի հեղինակի խնդրին՝ նա սխալ է համարում դրա հեղինակ Գեորգ Պալատցուն համարելը՝ հետևյալ հիմնավորումներով. ա. Վենետիկի Մխիթարյան միաբանության գրատանը պահպանվող օսմանյան պատմությանը վերաբերող Պալատցու աշխատությունների վերնագրերը և մեջբերումները չեն համապատասխանում №1496 ձեռագրի բովանդակությանը, բ. ըստ Հակոբյանի՝ Պալատցին չէր կարող այդքան մոտ կանգնած լինել օսմանյան արքունիքին, գ. № 1496 ձեռագրի հեղինակը կաթոլիկ է¹², իսկ Պալատցին՝ ոչ¹³: Ըստ Վ. Հակոբյանի՝ խնդրո առարկա ձեռագրի հեղինակը Իգնատիոս Մուրաջա դ'Օստոնն է (1740–1807), իսկ ձեռագրում զետեղված երկը հանդիսանում է դ'Օստոննի կողմից ֆրանսերենով շարադրված Օսմանյան յոթաստորանի պատմության երկրորդ հատորը¹⁴: Նա, ըստ Հակոբյանի, ծնված լինելով Կ. Պոլսում և լինելով Զմյուռնիայի շվեդական հյուպատոսի որդին, ապա դեսպանության թարգմանիչը, տիրապետելով մի շարք լեզուների և սերտ կապեր ունենալով թուրքական արքունիքի հետ, կարող էր շարադրել № 1496 ձեռագրում զետեղված Օսմանյան պատմությունը¹⁵:

Իգնատիոս Մուրաջա դ'Օստոննի կյանքի և ստեղծագործական գործունեության ուղին, անշրջանցելիորեն կապված լինելով օսմանյան իրականության հետ, ենթադրելիորեն չի բացառում նրա՝ խնդրո առարկա ձեռագրի հեղինակ լինելը: Նա իր ժամանակի համար փայլուն կրթություն էր ստացել՝ հմտանալով հատկապես ֆրանսերեն և թուրքերեն լեզուների մեջ¹⁶: Դառնալով Կ. Պոլսի եվրոպական հյուպատոսարանների

¹⁰ Վ. Հակոբյան. Մաշտոցի անվան Մատենադարանի - 1496 ձեռագրի ժամանակի և հեղինակի հարցի շուրջ.- Էջերի հայ ժողովրդի պատմության և բանասիրության (հոդվածների ժողովածու), Երևան, 1971, էջ 137–150:

¹¹ Նույն տեղում, էջ 146:

¹² «Պատմություն Օսմանցուց» երկի հեղինակի կաթոլիկ ինքնությունը -1496 ձեռագրում որևէ կերպ արտացոլված չէ: Վ. Հակոբյանը ևս իր հոդվածում այդ տեսակետը հիմնավորող որևէ փաստարկ չի բերում:

¹³ Վ. Հակոբյան. նշվ. հոդվ., էջ 147:

¹⁴ Նույն տեղում, էջ 150: Վ. Հակոբյանը ծանոթ է եղել դ'Օստոննի աշխատության միայն I և VII հատորներին (նույն տեղում):

¹⁵ Նույն տեղում, էջ 147–149:

¹⁶ «Գրական թերթ», 19. I. 1968:

թարգմանիչը՝ երիտասարդ գործչի համար բացառիկ հնարավորություն էր ստեղծվում մոտիկից ծանոթանալու օսմանյան պատմությանը, կայսերական բարքերին և սովորույթներին: Գիտելիքների այս պաշարն էլ երիտասարդ գիտնականն ի սպաս է դնում՝ եվրոպական երկրներին հասու դարձնելու օսմանյան պատմությունը: 1780-ականներին մեկնելով Փարիզ՝ դ'Օստոննը ձեռնամուխ է լինում «Օսմանյան կայսրության ընդհանրական պատմություն» գլխագրով բազմահատոր երկասիրության շարադրմանը, որի երկրորդ հատորն էլ Վ. Հակոբյանը համարել է № 1496 ձեռագրում զետեղված աշխատությունը: Վերջինիս այս տեսակետը, սակայն, մերժվում է անհերքելի փաստերով: Մեր ձեռքի տակ են Մուրաջա դ'Օստոննի նշված երկասիրության յոթ հատորներից վեցը¹⁷, որոնց մանրամասն քննությունը ցույց է տալիս, որ վերջիններս բովանդակային աղերսներ չունեն «Պատմութիւն Օսմանցոց» երկի հետ: Ի հակադրություն խնդրո առարկա երկի, ուր, ինչպես վերը նշեցինք, հիմնականում ներկայացված է օսմանյան կայսրերի ներքին և արտաքին քաղաքականությունը՝ վերջիններիս մղած պատերազմների ու եվրոպական երկրների հետ օսմանյան արքունիքի դիվանագիտական հարաբերությունների առանձին մանրամասնություններով, դ'Օստոննի աշխատության մեջ լուսաբանված են Օսմանյան կայսրության ռազմավարչական կառուցվածքը, հարկային համակարգը, շարիաթի օրենսդրությունների բովանդակությունը, ներքին արքունական կյանքը և այլն: Մենք հնարավորություն չունեցանք ծանոթանալու միայն «Օսմանյան կայսրության ընդհանրական պատմության» հինգերորդ հատորին, որի՝ Մատենադարանի № 1496 ձեռագրի համար հիմք չհանդիսանալը ևս՝ հիմնավորելի է: Մեզ հայտնի է, որ 1790 թ. Մուրաջա դ'Օստոննը, Փարիզից Կ. Պոլիս վերադառնալով, սուլթան Սելիմ III-ին է ներկայացրել իր աշխատությունների՝ մինչ այդ տպագրված հատորները¹⁸, որոնց համար սուլթանը նրան պարգևատրել է¹⁹: Դ'Օստոննի երկասիրության հինգերորդ հատորի տպագրման կոնկրետ թվականը հնարավոր չէր պարզել, բայց, ամենայն հավանականությամբ, այն պետք է լույս տեսած լինի չորրորդ հատորի երկրորդ գրքի տպագրումից, այն է՝ 1791 թ. ոչ շատ ուշ, այսինքն՝ սուլթան Սելիմ III-ի գահակալման ընթացքում: Պարբերաբար Կ. Պոլիս այցելող Մուրաջան, ամենայն հավանականությամբ, սուլթանին է ներկայացրել նաև իր երկի հինգերորդ հատորը: Դ'Օստոննը ցանկություն չէր ունենա օսմանյան կայսրը ներկայաց-

¹⁷ Ignance Mouradja d'Ohsson. Tableau général de l'Empire ottoman, t. premier, a Paris, M.DCC.LXXXVIII, t. second, a Paris, M.DCC.LXXXVIII, t. troisième, a Paris, M.DCC.LXXI, t. quatrième, première partie, a Paris, M.DCC.XCI, t. quatrième, seconde partie, a Paris, M.DCC.XCI, t. sixième, a Paris, M.DCCC.XXIV, t. septième, a Paris, M.DCCC.XXIV.

¹⁸ Մուրաջա դ'Օստոնն իր աշխատությունների յոթ հատորները տպագրել է 1788–1824 թթ. ընթացքում:

¹⁹ Վարք նշանաւոր հայոց, Մուրատճա տ'Օհսոն. – «Բանասեր», Կ. Պոլիս, առաջին հատոր, 1851, էջ 15–16, չ. Մրմբրյան. Ստուերք հին դէմքերու (1635–1900), Կ. Պոլիս, 1907, էջ 27, նույնի Մասնական պատմութիւն հայ մեծատուններու (1400–1900), Կ. Պոլիս, 1909, էջ 78:

նելու մի աշխատություն, որտեղ թուրքերը բնորոշված են որպես «չարագոյնք», «ուրացողք» և «աներեսք»²⁰, իսկ մահմեդական կրոնն անվանված է «անաստուած դաւանություն»²¹: Կարծում ենք, նշված փաստերը խոսուն վկայությունն են այն հիմնավորման, համաձայն որի «Պատմութիւն Օսմանցւոց» երկասիրության հեղինակը Իզնատիոս Մուրազա դ'Օստննը չէ:

«Պատմութիւն Օսմանցւոց»-ի հեղինակին ճշտելու համար պետք է հաշվի առնել հետևյալ կարևոր հանգամանքները. ա) երկի գրողը պետք է լիներ մեկը, ով ապրել և գործել է գերագանցապես Օսմանյան կայսրությունում, իսկ ավելի կոնկրետ՝ նրա մայրաքաղաք Կ. Պոլսում, բ) նա եղել է իր ժամանակի ուսյալ անձերից մեկը, ով գերագանց տիրապետել է ոչ միայն թուրքերենին, այլև արևելյան և արևմտյան մի քանի լեզուների: Այս հատկանիշներով կարելի է բնութագրել XVIII–XIX դդ. արևմտահայ մշակութային զարթոնքի ռահվիրաներից Գեորգ Դպիր Պալատցուն (Տեր-Հովհաննեսյան) (1737–1811), ում՝ խնդրո առարկա երկի հավանական հեղինակ լինելու օգտին կիսուենք ստորև:

Գ. Պալատցին ծնվել է Կ. Պոլսում՝ Պալատի Սբ. Հրեշտակապետ եկեղեցու ավագերեց Տեր-Հովհաննես քահանայի ընտանիքում²²: Նա իր նախնական կրթությունը ստացել է հոր մոտ, ապա ինքնակրթությամբ լրացրել կրթության պակասը²³: Պալատցին տիրապետել է բազմաթիվ լեզուների՝ թուրքերեն, պարսկերեն, արաբերեն, եբրայերեն, հունարեն, լատիներեն, իտալերեն և այլն²⁴: Օտար լեզուների գերագանց իմացության շնորհիվ Պալատցին կատարել է զանազան թարգմանություններ, կազմել քերականական ձեռնարկներ, որոնք շատ հաճախ ծառայել են որպես դասագիրք արաբների, պարսիկների և այլոց համար²⁵: Անգերագանցելի է հատկապես Պալատցու կազմած պարսկերենի բառարանը²⁶, որը ցայսօր չի կորցրել իր արժեքը: Գ. Պալատցին, սակայն, չի սահմանափակվել միայն քերականական ու թարգմանական աշխատություն-

²⁰ ՄՄ, ձեռ. - 1496, էջ 2ա:

²¹ Նույն տեղում:

²² Ա. Այվազյան. Շար հայ կենսագրութեանց, Կ. Պոլիս, 1893, էջ 12, Գ. Բամպուրճեան. Պալատեցի Գեորգ Դպիրի գերդաստանը. – «Հայաստանի կոչնակ» (Նյու Յորք), ապրիլի 19, 1952, թիվ 16, էջ 368:

²³ Հ. Աճառեան. Պատմութիւն հայոց նոր գրականութեան, պր. Ա, Նոր-Նախիջևան, 1910, էջ 106, Է. Աղայան. Հայ լեզվաբանության պատմություն (սկզբից մինչև մեր օրերը), հ. 1, Երևան, 1958, էջ 135:

²⁴ Է. Աղայան. նշվ. աշխ., էջ 135, Հ. Աճառեան. նշվ. աշխ., էջ 106, Ստ. Փափագյան. Դասագիրք ազգային պատմության, Երուսաղեմ, 1870, էջ 256, Բ. Չոբազեան. Գեորգ Դպիր Պալատեցու կեանքի եւ գործունեութեան տարեգրութիւն (1737–1811), Երևան, 1994, էջ 6:

²⁵ Մ. Սարգսյան. Գեորգ Դպիր Պալատեցին լեզվաբան-բառարանագիր (1737–1811). – «Բանբեր Մատենադարանի», 20, Երևան, 2014, էջ 204:

²⁶ Այս մասին մանրամասն տե՛ս Յ. Մարթատեան. Համայնապատկեր հայ մշակոյթի վերածնունդ (1715–1852). – «Մարմարա» (Ստամբուլ), 8. XII. 1963:

ների շարադրմամբ: Հայոց պատմությունից բացի²⁷, նա ձեռնամուխ է եղել նաև Օսմանյան կայսրության պատմությանը նվիրված աշխատությունների թարգմանությանն ու շարադրմանը: Պալատցին թարգմանել է կայսրության պատմության առաջնային սկզբնաղբյուրներից Հասանբեկզադեի «Թարիխ-ի Ալի Օսման» երկը: Իսկ Օսմանյան կայսրության պատմության վերաբերյալ Գ. Պալատցին հեղինակել է հետևյալ աշխատությունները.

Ա. «Գիրք պատմութեան արքայից Օսմանեան զարմին»: Այս աշխատության շարադրանքն ավարտվել է 1794 թ.²⁸ և Վենետիկի Մխիթարյաններին է հասել Պալատցու մահից հետո՝ 1827 թ.²⁹: Այն Գ. Այվազովսկու «Պատմութիւն Օսմանեան» երկհատոր աշխատության աղբյուրներից է³⁰: Բաղկացած է երկու հատորներից (Ս. Ղազարի Մատենադարան, ձեռ. № 1693 և № 1694). սկսում է Օսմանյան կայսրության ծագումից՝ «... հասեալ ժամանեալ մինչև ի սուլդան Ահմէտն Առաջին, որ է որդի Մէհմէտին Երրորդի»³¹: Այս աշխատության վերաբերյալ մեր տեղեկությունները թեև սահմանափակվում են նշված ձեռագրերի հակիրճ նկարագրություններով, սակայն, եղած փաստերն իսկ բացառում են № 1496, № 1693 և № 1694 ձեռագրերի բովանդակային նույնությունը: Ի տարբերություն խնդրո առարկա ձեռագրի, որն ավարտվում է սուլթան Իբրահիմ I-ի (1640–1648) գահակալումով, «Գիրք պատմութեան արքայից Օսմանեան զարմին» երկն ավարտվում է սուլթան Ահմէդ I-ի (1603–1617) ժամանակաշրջանով: № 1496 ձեռագրի գլուխների հետ № 1693 և № 1694 մատյանների՝ մեզ հասանելի վերնագրերի համեմատությունը ցույց է տալիս, որ դրանք բովանդակային աղերսներ չունեն միմյանց հետ:

Բ. «Գիրք պատմութեան թագաւորաց Օսմանեան զարմին»: Երկը գրի է առնվել 1788 թ. ապրիլի 29-ի և 1789 թ. մարտի 3-ի միջև³²: Այն վերոհիշյալ աշխատության հետ ունի գրեթե նույն վերնագիրը, բայց բովանդակային առումով տարբեր է³³: Վենետիկի Մխիթարյան միաբանության գրատան № 7 ձեռագրում գետեղված այս երկը բաղկացած է երկու հատորից: Առաջինում ներկայացված է օսմանյան պատմությունը կայսրերի գահակալման համատեքստում, իսկ երկրորդը պատմում է օսմանյան նշանա-

²⁷ Գ. Պալատցին հեղինակել է «Ազգային պատմութիւն» գլխագրով երկհատոր աշխատություն, որն անհայտացել է (Ա. Այվազովսկու. նշվ. աշխ., էջ 53–54, Ս. Ճեմճեմյան. Գեորգ Դպիր Տէր Յովհաննիսեան (Պալատցի) և Մխիթարեանները, Վենետիկ, 1984, էջ 122, Ա. Գալփաքճեան. Գեորգ Դպիր Պալատցի (անտիպ ուսումնասիրություն).– «Մարմարա» (Ստամբուլ), 20. VI. 1945):

²⁸ Բ. Չուգասովսկու. նշվ. աշխ., էջ 93:

²⁹ Ա. Մանուկեան. Գեորգ Դպիր Տէր Յովհաննիսեանի ձեռագիրները Ս. Ղազարու Մատենադարանին մեջ.– «Բազմավէպ» (Վենետիկ), 1957, թիւ 7–8, էջ 167:

³⁰ Նույն տեղում:

³¹ Նույն տեղում:

³² Նույն տեղում:

³³ Նույն տեղում:

վոր պետական գործիչների մասին³⁴: Այս երկի հատորներից ոչ մեկն էլ չի կարող հանդիսանալ N° 1496 ձեռագրի հիմքը: N° 7 ձեռագրի առաջին հատորն ավարտվում է ոչ թե սուլթան Իբրահիմ I-ի գահակալումով, ինչպես որ N° 1496 ձեռագրում է, այլ օսմանյան պատմությունը հասցրած է. «...մինչ ի յինքնակալն արդի ժամանակիս, որ կայ եւ ունի զգահ թագաւորութեանն շքեղաշուք վայելչութեամբ ի Կոստանդինուպօլիս քաղաքի»³⁵: Եթե երկը գրի է առնվել, ինչպես վերը նշվեց, 1788 թ. ապրիլի 29-ի և 1789 թ. մարտի 3-ի միջև, հետևաբար, խոսքը վերաբերում է սուլթան Աբդուլ Համիդ I-ին (1774 թ. հունվար – 1789 թ. ապրիլ):

Գ. «Պատմութիւն օսմանցոց՝ որք յարեան ի վերայ թագաւորին Սուլթան Մուստաֆային. Եւ հանին զնա ի գահէն վասն Ֆէյզուլլահ Միւֆդուն, որ եւ սպանին զնա ի յԱնդրիանուպօլիս» (Ս. Ղազարի գրատուն, ձեռ. N° 474): Այն գրվել է 1783 թ. ապրիլի 11-ին Կ. Պոլսում: Աշխատության առաջին մասն ունի ձեռագրի գլխագիրը, իսկ երկրորդ մասը վերնագրված է հետևյալ կերպ. «Բան՝ յաղագս նաւապետաց՝ զափուտան կոչեցելոց»: Երկի այս հատվածը թարգմանություն է՝ կատարված 1769 թ.³⁶: Թե՛ ձեռագրի թերթերի քանակը (առաջին մասը 34 թերթ, երկրորդը՝ 32), թե՛ երկի երկու մասերի վերնագրերը բացառում են վերջինիս՝ N° 1496 ձեռագրի համար հիմք հանդիսանալը:

1823 թ. Մխիթարյան միաբանության ընդհանուր արքահայր Հ. Ստեփանոս Ադոնցին ուղղված իր նամակում Ղ. Ինճիճյանը, խոսելով Գ. Պալատցու մահվան հանգամանքների վերաբերյալ, անդրադառնում է նաև վերջինիս թողած գրական ժառանգությանը: Նա նշում է, որ պոլսեցի մեծահարուստ ամիրա Հարություն Պեզճյանը, ով հոգացել էր Պալատցու հուղարկավորության ծախսերը, ցանկանում է Վենետիկում հրատարակել Գեորգ Դպիրի թողած աշխատություններից երկուսը՝ «զբառարանն պարսից, զոր ունիք այդր ի վանս (Վենետիկի Մխիթարյան միաբանությունը – Ս. Վ.), եւ միւս զՕսմանեան պատմութիւն (ընդգծումը մերն է – Ս. Վ.) յօրինեալ առ ի նմանէ»³⁷: Ապա Ինճիճյանն ավելացնում է, որ խոսքը չի վերաբերում Օսմանյան այն պատմությանը, որն ինքը Վենետիկ էր տարել 1790 թ.³⁸, այլ «ընդարձակն նորին»³⁹: Ղ. Ինճիճյանը, ամենայն հավանականությամբ, ակնարկում է վենետիկյան Մատենադարանի վերոհիշյալ N° 7 ձեռագիրը, որի ընդօրինակումը Մխիթարյանների մոտ «յամի Տեառն 1791»-ին կատարվելուց հետո, վերադարձվել էր Պալատցուն⁴⁰: Ինճիճյանի նշած «միւս

³⁴ Նույն տեղում:

³⁵ Նույն տեղում:

³⁶ Նույն տեղում, էջ 167–168:

³⁷ Ս. Ճեմճեմյան. նշվ. աշխ., էջ 64:

³⁸ Ղ. Ինճիճյանը Կ. Պոլիս Գեորգ Պալատցու մոտ էր մեկնել 1789 թ.՝ Վենետիկ վերադառնալով 1790-ին (նույն տեղում, էջ 44–45):

³⁹ Նույն տեղում, էջ 64:

⁴⁰ Նույն տեղում, էջ 38:

գՕսմանեան պատմութիւն»-ը № 1693 և № 1694 ձեռագրերում զետեղված վերոհիշյալ երկին վերագրելը ևս լիովին հիմնավոր չէ: Հ. Ստեփանոս Ադոնցին ուղղված նամակում Պալատցու հեղինակած օսմանյան պատմությունը, ի տարբերություն պարսկերեն բառարանի, ներկայացված է որպէս Մխիթարյաններին անձանոթ երկ: Մինչդեռ № 1693 և № 1694 ձեռագրերում շարադրված աշխատությանը Մխիթարյան արքահայրը ծանոթ էր դեռևս 1803 թվականից: Խնդիրն այն է, որ Հ. Ստեփանոս Ադոնցի՝ 1800 թ. Վենետիկի Մխիթարյան միաբանության արքահայր ընտրվելու կապակցությամբ Գ. Պալատցին 1803 թ. վերջինիս էր նվիրել պարսկերեն բառարանը և «Գիրք պատմութեան արքայից Օսմանեան գարմին»-ը՝ կրկնօրինակելու և ետ վերադարձնելու պայմանով⁴¹: Եթէ բառարանն արտագրվել և կարճ ժամանակում ետ էր վերադարձվել Պալատցուն, ապա նշված երկրորդ աշխատությունը դէպի Կ. Պոլիս վերադարձի ավելի երկար ճանապարհ է անցել: Մխիթարյան միաբանությունը Օսմանյան պատմության կրկնօրինակումը նպատակահարմար չհամարելով՝ 1805 թ. հենց Ղ. Ինճիճյանին էր հանձնարարել այն վերադարձնելու Գ. Պալատցուն⁴²: Ձեռագրի վերադարձը տիրոջը, սակայն, կատարվել է 1809 թ. հետո՝ 1826 թ.՝ Պալատցու մահից տարիներ անց Հակոբ Տյուզյանի կողմից նվիրաբերվելով Մխիթարյաններին⁴³: Ինչ վերաբերում է 1823 թ. Ղ. Ինճիճյանի հիշատակած Մխիթարյաններին անձանոթ օսմանյան պատմությանը, ապա վերջինիս մասին միայն հայտնի է, որ այն ծախսերի մեծության պատճառով չի տպագրվել և մնացել է Կ. Պոլսում⁴⁴: Նշված հանգամանքները թույլ են տալիս առաջ քաշելու այն տեսակետը, որ Ղ. Ինճիճյանի նամակում նշված օսմանյան պատմությունը կարող էր հանդիսանալ № 1496 ձեռագրում զետեղված «Պատմութիւն Օսմանցոց» վերտառությամբ երկը: Գ. Պալատցու № 1496 ձեռագրի հնարավոր հեղինակ լինելու մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ մաշտոցյան Մատենադարանում հանգրվանած Գեորգ Դպիրի ձեռքով շարադրված մատյանների (№ 1467, № 1676, № 8331 և № 10301) հետ № 1496 ձեռագիրն ունի էական նմանություններ⁴⁵:

⁴¹ Նույն տեղում, էջ 113–114:

⁴² Նույն տեղում, էջ 42:

⁴³ Ա. Մ ա ն ու կ ե ա ն. նշվ. աշխ., էջ 167:

⁴⁴ Ա. Ճ ե մ ճ ե մ յ ա ն. նշվ. աշխ., էջ 64:

⁴⁵ № 1496 ձեռագիրն իր գրչային առանձնահատկություններով առավել նման է № 1676, № 8331 և - 10301 մատյաններին:

О ВОПРОСАХ АВТОРСТВА И ВРЕМЕНИ НАПИСАНИЯ ПРОИЗВЕДЕНИЯ «ОСМАНСКАЯ
ИСТОРИЯ»

АРМЕН ВИРАБЯН

Резюме

В рукописи № 1496, сохранившейся в Матенадаране имени Месропа Маштоца, содержится произведение широкого масштаба «Османская история», которое всегда было предметом внимания исследователей. Отсутствие упоминаний о нем позволило исследователям выдвинуть различные точки зрения об авторе и времени написания произведения. Некоторые авторы (Г. Наджарян, Г. Анасян, М. Зулалян) считают, что работа принадлежит неизвестному автору. Однако В. Акопян приписывает произведение перу известного шведского ученого XVIII–XIX вв. Игнатиоса Мураджа д’Оссона и считает временем его написания 1789–1807 годы. Сопоставление всех имеющихся фактов позволяет заключить, что автором работы является константинопольский армянин, известный ученый XVIII–XIX вв. Георг Дпир Палатци, а периодом написания рукописи надо считать конец XVIII и начало XIX веков.

ON THE ISSUES OF THE AUTHOR AND THE TIME OF WRITING “THE TURKISH HISTORY”

ARMEN VIRABYAN

Summary

The manuscript № 1496 kept in Matenadaran named after Mesrop Mashtots contains the extensive work “The Turkish History” which has always been a subject of researchers' attraction. Lack of its mentions allowed the researchers to put forward different points of view concerning the author and the time of writing the work. Some of the authors (H. Najaryan, H. Anasyan, M. Zulalyan) consider the work to be of an unknown author. However, V. Hakopyan refers the work to the 18th–19th centuries prominent Swedish scholar Ignatius Mouradgea d’Ohssonin, and he considers the time of writing 1789–1807. The comparison of the available facts allows us to conclude that the author of this work is a Constantinopolitan Armenian prominent scholar of the 18th–19th centuries George Dpir Palatsi. The end of the 18th century and the beginning of the 19th century should be considered the period of writing this manuscript.